

«10» հոկտեմբեր 2019թ.

No 2913 - Լ

«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՊԱՀԱՆՋՈՂ ԿԱՆՉԵՐԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՂԱԿ
ՈՒՂՂՈՐԴՎՈՂ ԿԱՆՉԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող կանչերի և առողջության առաջնային պահպանման օղակ ուղղորդվող կանչերի դասակարգումը՝ համաձայն Հավելվածի:

2. Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանին.

1) մեկշաբաթյա ժամկետում սահմանել և առողջապահության նախարարի հաստատմանը ներկայացնել առողջության առաջնային պահպանման օղակ ուղղորդվող կանչերի միջինացված գին,

2) մինչև 2019 թվականի հոկտեմբերի 10-ը սահմանված կարգով կատարել սույն հրամանից բխող փոփոխությունները՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և առողջապահության նախարարության հետ 2019 թվականի պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին պայմանագրում:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանին (համաձայնությամբ)՝

1) հանձնարարել Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

ա. շտապ բժշկական օգնության ծառայության կողմից Նոր-Նորքի վարչական շրջանից գրանցված կանչերը տարանջատել և ուղղորդել «Սուրբ Գրիգոր

Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն՝ կանչերը հերթապահության ժամանակ իրականացնելու նպատակով,

բ. Նոր-Նորքի վարչական շրջանում գործող առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում գրանցված, սակայն Երևան քաղաքի այլ վարչական շրջաններում բնակվող պացիենտների առողջության առաջնային պահպանման օղակ ուղղորդման ենթակա կանչերը սպասարկել մինչև 90 րոպեի ընթացքում:

4. Առողջապահության նախարարության «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արման Հովակիմյանին՝

1) 2019 թվականի հոկտեմբերի 15-ից՝ եռամսյա ժամկետով, փորձարարական կարգով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության աշխատանքային ժամերից դուրս ժամը 18:00-24:00-ը սահմանել հերթապահություններ՝ առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժիշկների (թերապևտ, ընտանեկան բժիշկ) և բուժքույրերի կողմից շտապ բժշկական օգնության ծառայությունից ուղղորդված կանչերն իրականացնելու համար,

2) աշխատանքային օրերին աշխատանքային ժամերից դուրս ժամը 18:00-24:00-ը շտապ բժշկական օգնության ծառայությունից ուղղորդված կանչերն իրականացնելու համար հերթապահող բժշկական անձնակազմին ապահովել դեղարկղիկներով՝ համալրված առաջին օգնության անհրաժեշտ դեղերով և գործիքներով (ցանկը կցվում է) և տրանսպորտային միջոցով,

3) ապահովել տվյալ օրվա հերթապահություն իրականացնող բժշկական անձնակազմի կողմից հերթապահության ընթացքում կատարած այցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ պացիենտի առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկին,

4) ապահովել տվյալ օրվա հերթապահություն իրականացնող բժշկական անձնակազմի կողմից հերթապահության ընթացքում այցելած Նոր-Նորքի վարչական շրջանում բնակվող, սակայն այլ առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում հաշվառված պացիենտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում՝ իրազեկման թերթիկի (ձևը կցվում է) միջոցով

էլեկտրոնային փոստով տվյալ պացիենտի առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությանը,

5) սույն կետով սահմանված աշխատանքների ավարտից հետո, տասնօրյա ժամկետում վերլուծել փորձարարական կարգով իրականացված հերթապահությունների արդյունքները և ամփոփ տեղեկատվությունը ներկայացնել առողջապահության նախարարություն:

5. «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արման Խաչատրյանին (համաձայնությամբ):

սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո, տասնօրյա ժամկետում, ապահովել սույն հրամանի Հավելվածով հաստատված շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող կանչերի ծրագրային (էլեկտրոնային) մակարդակով ուղղորդումը առողջության առաջնային պահպանման օղակ:

6. Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Քոչարյանին՝

ուսումնասիրել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված տեղեկատվությունը և ներկայացնել առաջարկություն:

7. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում,

2) մշակել սույն հրամանից բխող իրազեկման միջոցառումների ծրագիր և ապահովել իրազեկման աշխատանքների իրականացումը:

8. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտյոմ Սմբատյանին:

Ա.ԹՈՐՈՍՅԱՆ

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ
ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԿԱՆՉԵՐԻ
ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՂԱԿ ՈՒՂՂՈՐԴՎՈՂ
ԿԱՆՉԵՐԻ

1. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ՝ ՄԻՆՉԵՎ 15 ՐՈՊԵԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՊԱՍԱՐԿՎՈՂ
ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵՐ

- 1) Կենսական կարևոր օրգան-համակարգերի (արյան շրջանառություն, շնչառություն, կենտրոնական նյարդային համակարգ) գործունեության խանգարմամբ պայմանավորված ախտաբանական, կյանքին սպառնացող՝ անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող վիճակ,
- 2) Կենսական կարևոր օրգան-համակարգերի գործունեության խանգարման բարձր ռիսկեր պարունակող, անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող ախտաբանական վիճակ, որը կարող է առաջանալ կարճ ժամանակում՝ բժշկական օգնության բացակայության դեպքում,
- 3) Արտակարգ իրավիճակներով, ճանապարհատրանսպորտային պատահարներով, զանգվածային, կենցաղային դժբախտ պատահարներով պայմանավորված վնասվածքները (երկարատև ճմլման համախտանիշ՝ Կրաշ սինդրոմ, ամպուտացված ծայրանդամներով վնասվածքներ, կտրվածքներ, հոդախախտեր, պատռված, ջնջիված, թափածակված վերքեր, սալջարդներ, այրվածքներ, ջրահեղձումներ, էլեկտրահարումներ և կայծակնահարումներ, ընդհանուր սառեցում, ցրտահարություն, ջերմահարություն, ջերմային հարված), օտար մարմիններ շնչուղիներում, արյունահոսություններ և կյանքին ու առողջությանը վտանգ սպառնացող նմանատիպ վիճակներ,
- 4) Որովայնի շրջանի ցավի, որովայնի խոռոչի օրգանների սուր զարգացող խանգարումների՝ վիրաբուժական, միզասեռական, մանկաբարձա-գինեկոլոգիական սուր հիվանդությունների ժամանակ,
- 5) Գիտակցության հանկարծակի խանգարումներ, ինսուլտներ, անգիտակից վիճակներ, ցնցումներ, շնչառության կտրուկ խանգարումներ՝ շնչահեղձություն, շնչարգելում, հևոց, ցավ կրծքավանդակում, սիրտանոթային համակարգի սուր

խանգարումներ, ՍՍԻ (սրտամկանի սուր ինֆարկտ), ՍԿՀ (սուր կորոնար համախտանիշ), աորտայի շերտազատող անևրիզմա, թոքային զարկերակի էմբոլիա, կյանքին վտանգ սպառնացող ռիթմի խանգարումներ, զարկերակային թերճնշման գրոհներ, հանկարծակի առաջացած ուժգին գլխացավեր, շոկի տարբեր տեսակի դրսևորումներ, կենդանիների, միջատների խայթոցներ, տարաբնույթ թունավորումներ, մարմնի ջերմաստիճանի կտրուկ բարձրացում 38,5⁰ և ավելի՝ հիպերթերմիկ ցնցումների առաջացման հնարավոր վտանգով,

6) Տանը, փողոցում կամ արտահիվանդանոցային այլ պայմաններում ընթացող ծննդաբերություն,

7) Հղիության ընթացքով պայմանավորված ախտաբանական վիճակներ,

8) Մինչև 7 տարեկան երեխաների համար տրված բոլոր կանչերը,

9) Վարակիչ հիվանդությունների ախտանիշներով ուղեկցվող վիճակներ, եթե կա անհետաձգելի բժշկական օգնության կամ պացիենտների հոսպիտալացման անհրաժեշտություն,

10) Առանց որոշակի պատճառի հանկարծակի առաջացած հիվանդագին վիճակներ

11) Հանկարծակի առաջացած ցավերի դեպքում,

12) Տեսողության հանկարծակի կորուստ, գլաուկոմայի սուր նոպայի դրսևորում,

13) Հասարակական վայրերից, հիմնարկ ձեռնարկություններից, փողոցից և այլ վայրերից տրվող կանչերը,

14) Քրոնիկ հիվանդությունների սրացումների ժամանակ, եթե դրանք պահանջում են անհետաձգելի օգնություն:

2. ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԻ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵՐ

Առաջին տեսակի շտապօգնության կանչերը բնակիչներից, հասարակական վայրերից, բժշկական կազմակերպություններից (այն դեպքերում, երբ կանչ տվող բժշկական կազմակերպությունում բացակայում են համապատասխան մասնագիտացված բաժանմունքը, բուժման համար պահանջվող տեխնիկական պայմանները (սարքեր), մասնագիտական ներուժը, անհրաժեշտ դեղերը) տրված և սույն ցանկում նշված կանչերն են, երբ պացիենտին անհրաժեշտ է ցուցաբերել նեղ մասնագիտացված բժշկական օգնություն և տեղափոխում համապատասխան բժշկական կազմակերպություն և երբ պացիենտի կյանքին կամ առողջությանը ակնհայտ վտանգ է սպառնում: Այս կանչերը սպասարկվում են մինչև 20 րոպեի ընթացքում:

Բնակչությունից ստացվող կանչեր.

- 1) Արտակարգ իրավիճակների, աղետների և ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերում ստացված կանչեր
- 2) Հասարակական վայրերից, հիմնարկ ձեռնարկություններից, փողոցից և այլ վայրերից տրվող կանչերը
- 3) Բարձրությունից ընկած
- 4) Զրահեղծում
- 5) Կախում
- 6) Հրազենային վնասվածքներ
- 7) Դանակահարություն
- 8) Էլեկտրահարություն
- 9) Կայծակնահարություն
- 10) Հրդեհ, պայթյուն, փլուզում և այլն
- 11) Հանկարծակի առաջացած շնչահեղձում, շնչարգելում, հևոց
- 12) Կրծքավանդակում առաջացած ցավ, որն ուղեկցվում է խիստ արտահայտված թուլությամբ, սառը քրտինքով, դիժմի խանգարմամբ՝ սկսված առաջին անգամ և/կամ նախկինում կրած սրտամկանի ինֆարկտից հետո, ինչպես նաև կրծքավանդակում առաջացած այլ ցավերի դեպքում

- 13) Հանկարծակի առաջացած ռիթմի խանգարման նշաններ, որոնք պացիենտի մոտ երբևէ չեն արձանագրվել
- 14) Զարկերակային ճնշման կտրուկ բարձրացում (սիստոլիկ ճնշման 180մմ/սնդ. սյան և ավելի) կամ իջեցում, որն ուղեկցվում է կրծքավանդակի ցավով, ռիթմի խանգարմամբ, ընդհանուր թուլությամբ, գլխացավով, գլխապտույտով, փսխման, գիտակցության, խոսակցական ակտի, վերջույթներում շարժումների և զգացողության խանգարման երևույթներով
- 15) Թունավորումներ բուսական, քիմիական ծագման նյութերից
- 16) Կենդանիների կծած վերքեր
- 17) Օձի, կարիճի խայթոց
- 18) Ալերգիկ վիճակներ՝ Կվինկեյի այտուցի, անաֆիլակտիկ շոկի ախտանիշներով
- 19) Ցնցումային համախտանիշ
- 20) Գիտակցության հանկարծակի խանգարումներ, ինսուլտներ, անգիտակից վիճակներ
- 21) Տարբեր պատճառներով առաջացած, արտահայտված արյունահոսություններ (ստամոքս-աղիքային, թոքային, արգանդային, քթային, ծայրանդամներից՝ վնասվածքների պատճառով առաջացած և այլն)
- 22) Գանգուղեղային և պարանոցի վնասվածքներ
- 23) Կոնքի և խողովակավոր ոսկրերի կոտրվածքների նշաններով արտահայտված վնասվածքներ
- 24) Մարմնի մակերեսի և լորձաթաղանթների այրվածքներ
- 25) Ընդհանուր սառեցման, ցրտահարման նշաններ
- 26) Որովայնում առաջացած հանկարծակի խիստ ցավեր՝ ուղեկցվող սառը քրտինքով, թուլությամբ, փսխմամբ, սուր որովայնի ախտանիշներով
- 27) Հղիության նորմալ ընթացքի խանգարումով պայմանավորված ախտաբանական վիճակներ (տոքսիկոզներ, էկլամպսիա, արյունահոսություն, պտղաջրերի արտահոսք)
- 28) Մանկաբարձագինեկոլոգիական սուր ախտահարումներ
- 29) Տեսողության հանկարծակի կորուստ, գլաուկոմայի սուր նոպայի դրսևորում

Բժշկական կազմակերպությունների կողմից տրված կանչեր.

30) «ԷսՏե» (ST) էլեացիայով սրտամկանի սուր ինֆարկտ (STEMI), ՍԿՀ (սուր կորոնար համախտանիշ), (բուժապասարկումը պահանջում է համապատասխան

31) մասնագիտացված անձնակազմ՝ անհրաժեշտության դեպքում միջամտական սրտաբանական և սրտավիրաբուժական կենտրոններ տեղափոխելու համար)

31) Սուր սիրտանոթային անբավարարություն

32) Սրտային ասթմա, թոքերի այտուց

33) Առաջին անգամ առաջացած պարոքսիզմալ տախիկարդիաներ, կյանքին վտանգ սպառնացող առիթմիաներ

34) Աթմատիկ ստատուս

35) Էպիլեպտիկ ստատուս

36) Հատուկ վտանգավոր հիվանդություններ

37) Շոկի, կոմայի ցանկացած տեսակների դեպքում

38) Աորտայի շերտազատող անևրիզմայի, խոշոր զարկերակների, թրոմբոէմբոլիաների և թրոմբոզների դեպքերում (թոքային զարկերակի էմբոլիա, որովայնային աորտայի, մեզենտերիալ և ազդրային զարկերակների էմբոլիաներ և թրոմբոզներ)

39) Սուր որովայն, վիրաբուժական սուր հիվանդություններ (սուր պանկրեատիտ, ստամոքսի և 12-մատնյա աղու խոցի թափածակում, սուր ապենդիցիտ, աղիների անանցանելիություն, սուր խոլեցիստիտ, օղակված ճողվածքներ, ստամոքսաղիքային արյունահոսություններ և այլն)

40) Գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարումներ՝ ուղեկցվող անգիտակից վիճակով, շնչառության խանգարմամբ, ցնցումներով, ծայրանդամների պարեզով, որոնք պահանջում են մասնագիտացված բժշկական օգնություն և տեղափոխում համապատասխան բժշկական կազմակերպություն

41) Սուր շնչառական խանգարումներ, որոնք պահանջում են մասնագիտացված բժշկական օգնություն և տեղափոխում համապատասխան բժշկական կազմակերպություն

42) Սննդային տոքսիկոհինֆեկցիաներ՝ ուղեկցվող տոքսիկոզի ախտանիշներով (սրտխառնոց, փսխումներ, լուծ, ընդհանուր թուլություն, ջերմություն և այլն)

43) Սպորնտան պնևմոթորաքս՝ բարդացված սուր շնչառական խանգարմամբ, որը պահանջում է մասնագիտական բժշկական օգնություն և անհապաղ տեղափոխում համապատասխան բժշկական կազմակերպություն

44) Գանգուղեղային, ողնաշարի պարանոցային և այլ հատվածի վնասվածքներ, որոնք ուղեկցվում են կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող ախտանիշներով

45) Կրծքավանդակի, որովայնի խոռոչի օրգանների վնասվածքներ, որոնք ուղեկցվում են սուր շնչառական և արյան շրջանառության սուր խանգարումներով և վտանգ են սպառնում տուժածի կյանքին կամ առողջությանը

46) Ծայրանդամների վնասվածքներ՝ կոտրվածքներ, հոդախախտեր, որոնք ուղեկցվում են վնասվածքային շոկի ախտանիշներով, և պահանջվում է անհապաղ բժշկական օգնություն և հոսպիտալացում համապատասխան բժշկական կազմակերպություն

47) Ծանր այրվածքներ, որոնք պատճառել են մարմնի ընդհանուր մակերեսի 20% և ավելի վնասվածք, և անհրաժեշտություն կա հոսպիտալացնել համապատասխան բժշկական կազմակերպություն

48) Տարբեր պատճառներով առաջացած սուր թունավորումներ, որոնք դրսևորվում են պացիենտի կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող ախտանիշներով, և անհրաժեշտություն կա տեղափոխել համապատասխան բժշկական կազմակերպություն

49) Ալերգիաներ՝ ուղեկցվող անաֆիլակտիկ շոկի ախտանիշներով:

3. ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵՐ

Երկրորդ տեսակի շտապօգնության կանչեր են՝ բնակչության կողմից, հասարակական վայրերից, բժշկական կազմակերպություններից (այն դեպքերում, երբ կանչ տվող բժշկական կազմակերպությունում բացակայում են համապատասխան մասնագիտացված բաժանմունքը, բուժման համար պահանջվող տեխնիկական պայմանները (սարքեր), մասնագիտական ներուժը, անհրաժեշտ դեղերը) տրված և սույն ցանկում նշված կանչերը, երբ անհրաժեշտ է տրամադրել նեղ մասնագիտացված բժշկական օգնություն և տեղափոխում համապատասխան բժշկական կազմակերպություն և երբ պացիենտի կյանքին կամ առողջությանը սպառնացող ռիսկը բարձր է կամ առկա է դրա վտանգը: Այս տեսակի կանչերը սպասարկվում են մինչև 45 րոպեի ընթացքում:

Բնակչությունից ստացվող կանչեր.

- 1) Զարկերակային գերճնշման գրոհ՝ սիստոլիկ ճնշման մինչև 180մմ/սնդ. սյան ցուցանիշով, ուղեկցվող թիրախ օրգանների կլինիկական ախտանիշների դրսևորմամբ
- 2) Ուղեղի արյան շրջանառության խանգարում՝ առանց ուղեկցող բարդությունների դրսևորման
- 3) Բրոնխիալ ասթմայի նոպա
- 4) Ցավ որովայնում, որը չի ուղեկցվում սուր որովայնին բնորոշ ախտանիշներով, արյունահոսությամբ և/կամ առաջացել է աղեստամոքսային տրակտի քրոնիկ հիվանդությունների սրացման հետևանքով
- 5) Սուր միզակապություն, երիկամային խիթ
- 6) Եղնջացանով արտահայտված ալերգիկ ռեակցիաներ, որոնք չեն ուղեկցվում անաֆիլակտիկ շոկի, Կվինկեի այտուցի ախտանիշներով
- 7) Գլխի փափուկ հյուսվածքների վնասվածքներ, որոնք չեն ուղեկցվում գանգուղեղային վնասվածքների ախտանիշներով
- 8) Կրծքավանդակի, որովայնի շրջանի թեթև վնասվածքներ, որոնք չեն ուղեկցվում սուր շնչառական, հեմոդինամիկ, հիպովոլեմիկ շոկի դրսևորման ախտանիշներով

- 9) Վերջույթների վնասվածքներ, որոնք չեն ուղեկցվում արտահայտված ցավով, արյունահոսությամբ, վնասվածքային շոկի, կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող ախտանիշներով
- 10) Առանց գիտակցության կորստի, կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող ախտանիշների ուղեկցմամբ ակոհոլային ինտոքսիկացիայի երևույթներ
- 11) Առանց կոմատոզ երևույթների, շաքարային դիաբետով հիվանդների կողմից տրված կանչեր
- 12) Վարակիչ հիվանդություններ
- 13) Ցավային համախտանիշով ուղեկցվող ուռուցքաբանական հիվանդություններ

Բժշկական կազմակերպությունների կողմից տրված կանչեր.

- 14) Առանց «ԷսՏե» (ST) էլեացիայի սրտամկանի սուր ինֆարկտ, ոչ ստաբիլ ստենոկարդիա
- 15) Կյանքին վտանգ չսպառնացող ռիթմի խանգարումներ, որոնք հիվանդի մոտ հանդիպում են հաճախակի՝ կրելով պարբերական բնույթ
- 16) Զարկերակային գերճնշման գրոհ՝ ուղեկցվող թիրախ օրգանների կլինիկական ախտանիշների դրսևորմամբ, սիստոլիկ զարկերակային ճնշման մինչև 180մմ/սնդ. սյան բարձրացմամբ
- 17) Ուղեղի արյան շրջանառության սուր խանգարումեր՝ առանց օջախային ախտահարումների կլինիկական ախտանիշների դրսևորման
- 18) Որովայնի խոռոչի սուր վիրաբուժական հիվանդություններ (սուր ապենդիցիտ, սուր խոլեցիստիտ, լեղաքարային հիվանդության սրացում, օղակված ճողվածք)՝ առանց պերիտոնիտի ախտանիշների դրսևորման
- 19) Երիկամային խիթ, հեմատուրիա
- 20) Սուր միզակապություն
- 21) Սուր երիկամային անբավարարություն, օլիգո-անուրիա
- 22) Էպիլեպտիկ ստատուս
- 23) Արյունահոսություններ

4. ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵՐ

Երրորդ տեսակի շտապօգնության կանչեր են համարվում բնակչության կողմից, հասարակական վայրերից, բժշկական կազմակերպություններից տրված և սույն ցանկում նշված կանչերը, երբ պացիենտի առողջությանը սպառնացող ռիսկը ցածր է: Այս տեսակի կանչերը սպասարկվում են մինչև 60 րոպեի ընթացքում.

- 1) Աղետամոքսային տրակտի քրոնիկ հիվանդությունների սրացումներ, որոնք կարիք չունեն անհապաղ հոսպիտալացման
- 2) Ռադիկուլիտ, օստեոխոնդրոզ, նյարդարմատային համախտանիշով ուղեկցվող վիճակներ
- 3) Վնասվածքից մեկ օր անցած ինֆեկցված վերքեր, այրվածքներ, որոնք կարիք ունեն հոսպիտալացման
- 4) Միգրեն, նևրիտ
- 5) 38.5° և ավելի ջերմությամբ ընթացող ՍՇՎ (սուր շնչական վարակ), չբարդացած թոքաբորբ, տոնզիլիտ, հարբուխ, որոնց չի այցելել ԱԱՊ բժիշկ:

5. ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՈՐԴՎՈՂ ԿԱՆՉԵՐ

Այն դեպքում, երբ կանչն ուղղորդվում է պոլիկլինիկական բժշկական կազմակերպության աշխատանքային ժամերին կամ հերթապահության համար սահմանված ժամերին կանչը սպասարկվում է ստանալուց հետո՝ մինչև 90 րոպեի ընթացքում:

Այն դեպքում, երբ կանչը ուղղորդվում է հերթապահության ավարտին՝ կանչերը սպասարկվում են հաջորդ աշխատանքային օրվա առաջին ժամերին.

1) Առանց կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող ախտանիշների ուղեկցման, մինչև 38,5° ջերմության պատճառով տրվող կանչերը

2) հարբուխ, ռինիտ, տոնզիլիտ

3) Առանց կլինիկական արտահայտված ախտանիշների զարկերակային գերճնշում (զարկերակային գերճնշման ցուցանիշը բարձր է 140/89)

4) Քրոնիկական ընթացք ունեցող հոդացավեր, մկանացավեր

5) Քրոնիկական ալկոհոլիզմով և քրոնիկական այլ հիվանդություններով տառապող պացիենտների կրկնակի (մեկ օրվա մեջ) կանչերը՝ առանց նոր, սրացած ախտանիշների

6) Օնկոլոգիական հիվանդություններով տառապող պացիենտների կողմից տրված կրկնակի կանչերը՝ առանց նոր, սրացած ախտանիշների

7) Նույն պացիենտի վերաբերյալ նույն հասցեից նույն պատճառով կանչից հետո 24 ժամվա ընթացքում տրված հաջորդող կանչ(եր)ը, որոնց առաջին կանչի դեպքում չի արձանագրվել անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող իրավիճակ, եթե պացիենտի մոտ ի հայտ չեն եկել նոր կամ սրացված ախտանիշները:

ՑԱՆԿ
ԱՌԱՋԻՆ ՕԳԵՈՒԹՅԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ

Դեղի անվանումը	Դեղաձևեր	Քանակ
Էպինեֆրին	լուծույթ ներարկման համար	1
Գլիցերիլ տրինիտրատ	ենթալեզվային դեղահատեր կամ ենթալեզվային աերոզոլ	10 կամ 1
Սալբուտամոլ	աերոզոլ ինհալացիոն դոզավորված	1
Կապտոպրիլ	դեղահատեր	20
Դեքսամետոզոն	ներերակային, միջմկանային լուծույթներ	1
Ֆուրոսեմիդ	դեղահատեր	10
Մետամիզոլ	ներերակային, միջմկանային լուծույթներ	3
Կետոպրոֆեն	ներերակային, միջմկանային լուծույթներ	3
Դիֆենհիդրամին	միջմկանային լուծույթներ	3
Սպիրտային անձեռոցիկ		20
Բինտ		2
Տոնոմետր		1
Ֆոնենդոսկոպ		1
Մկրատ		1
Շպատել		10
Ջերմաչափ		1
Լարան		1
Ներարկիչ	2 մլ	5
Ներարկիչ	5 մլ	5
Ձեռնոց		20
Դիմակ		20
Բախիլ		20
Թափոնների տոպրակ		2

Ձև

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՏՆԱՅԻՆ ԿԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ N _____

1. Առողջության առաջնային պահպանման ծառայություններ իրականացնող բժշկական հաստատություն

2. Պացիենտի _____
(անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

3. Բնակության վայրը _____

4. Հեռախոսահամարը _____

5. Տնային կանչի օրը, ամիսը, տարեթիվը և ժամը-----

6. Կատարված միջոցառումները`

1) Ցուցաբերված բուժօգնություն, այդ թվում` խորհրդատվություն, դեղերի տրամադրում

2) Խորհուրդներ և նշանակումներ

7. Տնային կանչը սպասարկող հերթապահող բժիշկ _____

8. Իրազեկման օրը, ամիսը, տարեթիվը «___» _____ 201 թ.